Ուստի և զարմանալի չէ, որ անկախութեան առաջին օրերից հէնց նրանք սկսել էին մտածել «ինքնորոշման», իրենց քաղաքական դիրքն ու ընթացքը որոշելու մասին: Այդ նպատակին ծառայեց Արևմտահայ Երկրորդ Համագումարը, Երևանում, փետր. 6—13-ին:

Համագումարը ծրագրուեց միջկուսակցական մի շարք խորհրդակցութիւնների մէջ, ուր դեկտ. 19-ին կազմուեց համագումարի կազմակերպիչ կոմիտէ: Այս վերջինիս դիմումի վրա՝ Հայ. Խորհուրդը դեկտ. 28-ին տրամադրեց 35,000ռ. համագումարի կարիքների համար: Համագումարը ենթադրւում էր բանալ յունւ. 25-ին, բայց շրջանների պահանջով՝ յետաձգուեց տասն օրով: Խորհրդակցութիւնների մէջ կազմուել էր հետևեալ օրակարգը.

«1. Արևմտեան Հայաստանի զաղթական հայութեան քաղաքական նպատակներու ձևակերպումն ու արտայայտութիւնը:

2. Արևմտեան Հայաստանի զաղթական հայութեան ներդաղթի խնդիրը և կազմակերպութիւնը:

3. Արևմտեան Հայաստանի զաղթական հայութեան ներկայացուցչական և հաշուեյարդարի մարմնի ընտրութիւնը»:

Համագումարը կազմուեց ժողովրդական քուէարկութեամբ՝ երկաստիճան ընտրական սկզբունքով: Համագումարը ներկայացնում էր հետևեալ կազմը*):

Երևան՝ 31,700 զաղթական — 8 պատգամաւոր. Հ. Կոսոյեան, Զ. Կորկոտեան, Հ. Հայրապետեան, Հ. Կարինեան, Ռ. Շատուրեան, Ե. Ալեքսանեան, Մ. Մալոյեան, Ա. Աւետիսեան:

Էջմիածին՝ 46,600 զաղթական — 3 պատգ. Եղնիկ վարդ. Ներկարարեան, Ց. Մուղոյեան, Վ. Համբարձումեան:

Աշտարակ՝ 12,880 զաղթական — 2 պատգ. Գ. Ոսկերչեան, Ռ. Թերլեմեզեան:

Ծաղկաձոր՝ 23,750 զաղթական — 5 պատգ. Տ. Ղիմոյեան, Շ. Բասենցեան, Տ. Թերլեմեզեան, Մ. Մանուկեան, Հ. Աբրահամեան:

Կոտայք՝ 17,570 զաղթական — 5 պատգ. Ա. Մանուկեան, Շ. Շարանբէյեան, Ա. Ղուկասեան, Ս. Գալստեան, Ց. Շահբազեան:

Սուրմալու՝ 25,700 զաղթական — 4 պատգ. Ա. Միրզոյեան, Օ. Ղորղանեան, Թէյֆուր բէգ և Թեմուր աղա:

Միլլի Ջոր՝ 10,670 զաղթական — 1 պատգ. Ա. Մխիթարեան:

Ալեքսանդրապոլ՝ 10,000 զաղթական — 1 պատգ. Ս. Խալոյեան:

Դիլիջան՝ 12,000 զաղթական — 2 պատգ. Վ. Առաքելեան, Ղ. Ցովսէփեան:

Բաշ-Գեառնի՝ 5000 զաղթական — 1 պատգ. Մ. Դարմանեան:

---

*) Բոլոր քաղուածները առնում ենք «Համառօտ տեղեկագիր Արևմտահայ Երկրորդ Համագումարի, 1919թ. Թիֆլիս. հրատ. Արևմտահայ Գործադիր Մարմնի» գրքոյկից: